# 4 հարց, 12 պատասխան

**Մեր թղթակիցը դիմեց Սևանի հասարակական-քաղաքական կազմակերպությունների և տեղական իշխանության ղեկավարներին հետևյալ հարցերով.**

**1. Ո՞րն է Սևանի քաղաքական կյանքի ակտիվացման ձեր դերը:**

**2. Ձեր կարծիքով ինչպիսի՞ն կլինեն հանրաքվեի արդյունքները շրջանում:**

**3. Ո՞րն է Հայաստան-Ադրբեջան կոնֆլիկտի լուծման բանալին:**

**4. Սեպտեմբերի 21-ից հետո Հայաստանը տնտեսական ի՞նչ ծրագրերով է առաջնորդվելու:**

***ՀԿԿ Սևանի շրջկոմի առաջին քարտուղար՝ Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

1. Ընդհանրապես, ես միշտ կողմ եմ եղել բազմակուսակցականությանը, որը պետք է պայմանավորված լինի դեմոկրատական ընտրություններով: Ներկա իշխանությունները, չնայած որ ճանաչել են մի շարք կուսակցություններ, ամեն դեպքում տանում են կադրային սխալ քաղաքականություն, որը «նորաձև դիկտատուրայի» հաստատման նախանշան է:

2. Իմ և մեր կուսակցության նպատակը միակն է՝ հանրաքվեի արդյունքները պետք է լինեն անկողմնապահ: Ես հիմա ժամանակից շուտ չեմ ուզում եզրակացություններ անել, որովհետև օրեցօր քաղաքական իրավիճակը փոփոխվում է, իսկ դա ազդում է մարդկանց տրամադրության և հոգեբանության վրա: Հետո, հանրաքվեի հարցադրումը ճիշտ չի ձևակերպված, ուղղակի ընտրության տեղ չկա: Ավելի ճիշտ կլիներ, եթե հարցադրումները լինեին հետևյալ կերպ. համաձա՞յն եք անկախ Հայաստանին՝ ԽՍՀՄ կազմից դուրս, թե՞ ազատ Հայաստանին՝ նորոգ Միության կազմում: Ես անձամբ չեմ կարող մասնակցել անցկացվող հանրաքվեին, որքան էլ դա ինձ համար անցանկալի է, որովհետև, նորից եմ կրկնում, հարցադրումը միակողմանի է:

3. Հայաստան-Ադրբեջան կոնֆլիկտի լուծման բանալին՝ նոր Ֆեդերացիայի կազմում Արցախը որպես սուբյեկտ ճանաչելն է, չնայած որ մեր այսօրվա իշխանությունների ոչ այնքան հեռատես քաղաքականության հետևանքով այդ ճանապարհին քիչ բան չենք կորցրել: Մենք չօգտագործեցինք Վոլսկու իշխանության ժամանակաշրջանը, ձեռնարկող արեցինք կենտրոնից Արցախին տրամադրված միլիոնները, որոնց մի մասը գոնե կարող էինք օգտագործել, վերջապես, անցել են կենտրոնի ներկայության ժամանակները, երբ Արցախում գործում էին օրինական իշխանությունները: Այսօր Ադրբեջանը օգտագործում է մեր այդ սխալը ու չի գնում երկխոսության, որովհետև իրականացվում է նրա կողմից տարվող և կենտրոնից հավանության արժանացած քաղաքականություն: Մենք պետք է մասնակցենք միութենական դաշնագրի գոնե քննարկմանը, որից հետո, հաջորդ փուլում կարողանանք լուծումներ գտնել մեր առջև ծառացած ամենամեծ խնդրի՝ Ղարաբաղի հիմնահարցի ու մյուս խնդիրների համար:

4. Մենք սեպտեմբերի 21-ին գնում ենք առանց հստակեցված ծրագրի, ու ստանալու ենք զուտ պատահական արդյունքներ: Եթե կա անկախությանը վերաբերող որոշակի մարտավարություն, ապա Նախարարների խորհուրդը պարտավոր է այն ներկայացնել համաժողովրդական քննարկման: Փաստորեն դուրս է գալիս, որ առանց բազիսի կառուցում ենք վերնաշենք, որի փլուզումից հետո կարող են մնալ միայն քաղաքակիրթ երկրների ցավակցությունները՝ ուղղված մի ողջ ազգի:

***ՀՅԴ-ի Սևանի վարչության նախագահ Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ***

1. Հիմա չէի ցանկանա գնահատական տալ մեր քաղաքական գործունեությանը, բայց միանշանակ կցանկանայի ասել, որ ավանդական դարձած միագույն քաղաքական կյանքը, եթե, իհարկե, դա կարելի է անվանել քաղաքական կյանք, մեր կազմակերպության ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ բերել գոնե ընդունելի վիճակի:

2. Ինձ համար ընդունելի չէ այս հարցադրումը այն իմաստով, որ դրա սակարկման համար հարկավոր է առնվազն ես գնալ չորս հազար տարի, որովհետև Ձեր հարցի պատասխանն արդեն վաղուց մեր նախահայր Հայկի կողմից տրված է:

3. Միմիայն ուժային քաղաքականությունը:

4. Համենայն դեպս, առաջնորդվելու է ոչ գաղութային տնտեսական ծրագրերով:

***Սևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահ, Գերագույն խորհրդի պատգամավոր Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ***

1.2. Ես կողմ եմ հասարակական-քաղաքական բոլոր կազմակերպությունների գործունեությանը, որոնց հետ ինձ հաջողվել է գնալ երկխոսության: Արվում է ամեն ինչ, որպեսզի բարձրացվի ժողովրդի ինքնագիտակցությունը ու, դրա հետ կապված, կարող եմ միանգամից տալ ձեր երկրորդ հարցի պատասխանը. վստահ եմ, որ հանրաքվեի արդյունքները շրջանում կլինեն դրական՝ մեծամասնությունը կողմ կքվեարկի անկախությանը:

3. Այսօրվա մեր կառավարությունն այդ հարցում ունի ճիշտ դիրքորոշում, որովհետև, եթե Հայաստան-Ադրբեջան կոնֆլիկտի պատճառը Ղարաբաղի հիմնահարցն է, ապա տարվում է քաղաքական ճիշտ կուրս: Այստեղ պետք է պահպանվի ստատուս քվոն: Ընդհանրացնելով միտքս՝ ասեմ, որ Հայաստան-Ադրբեջան կոնֆլիկտի լուծման բանալին հայ ազգի քաղաքական ինքնագիտակցության պահպանումն է:

4. ՀՀ-ն արդեն գործի է դրել իր տնտեսական ծրագիրը՝ հողի սեփականաշնորհում, մանր ձեռնարկությունների մասնավորեցում և այլն: Շուտով պետք է սկսվեն վարչատարածքային նոր բաժանումները: Այն տալու է տնտեսական մեծ արդյունք: Այս բոլոր հարցերով զբաղվում է ՀՀ արտաքին տնտեսական հարաբերությունների նախարարությունը, որը տեղերին տվել է լայն իրավունքներ: Օրինակ, Սևանի շրջանը կարող է պայմանագիր կնքել ցանկացած երկրի հետ՝ այս կամ այն հարցերի շուրջ: Ես կողմնակից եմ տեղական հումքով զարգացող արդյունաբերությանը, բայց դրա հետ մեկտեղ ճկուն քաղաքականություն պետք է տարվի միջհանրապետական կոոպերացիայի այնքան բարդ աշխատանքներում: Իմ կարծիքով, սեպտեմբերի 21-ը ժողովրդի կամքի արտահայտությունն է լինելու, իսկ կոնկրետ տնտեսական գործունեությունը սկսվելու է նախագահական ընտրություններից հետո:

**Պատրաստեց** *Վ. ՍԻՄՈՆՅԱՆԸ*